Ազդարարության Trumpet's Sound փող

53-ՐԴ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱԼԻՍ
ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2022

Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԴԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույումճյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Յանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արդյոք հյուրասե՞ր եք ..... Հովիվ՝ Հրաչ Գույումճյան

Հիսուսին հետևել ..... Քաղված

Հիվանդանոցի պատուհանը ..... Քաղված

Առանց արյուն թափելու թողություն չկա ..... Քաղված

Բարի համբավ ..... Ներսես Պոյաճյան

Թասերի դատաստանն ու Բաբելոնի անկումը (3) ..... QMBC պանորամա

Տիտանիկը ..... Ռեքս Տիրլավ

Հնազանդվե՞լ, թե՞ չհնազանդվել ..... Վեր. Հովսեփ Հովսեփյան

Մի՛ սիրեք աշխարհը ..... Վարդան Սարգիսյան

Մովսեսի անհաջողությունները ..... Դոն Սթորմըր

Արդյոք հյուրասե՞ր եք

«Սրբերի կարիքներին հաղո՛րդ եղեք, հյուրասիրությանը հետևե՛ք» (Հռոմ. 12:13):

Աստված քաջալերում է մեզ՝ հյուրասիրությամբ ծառայել ամեն օր:

«Մի՛ մոռացեք հյուրասեր լինել, որովհետև դրա շնորհիվ ոմանք առանց իմանալու հրեշտակներ հյուրընկալեցին» (Եբր. 13:2):

«Միմյանց հյուրասիրե՛ք առանց տրտնջալու» (Ա Պետ. 4:9):

Ես սիրում եմ այս համարները, որոնք խրախուսում են մեզ հյուրասեր լինել: Բարի սամարացին ամեն ինչ արեց՝ խեղճ վիրավորին օգնելու համար:

«Հաջորդ օրը, երբ մեկնելու էր, երկու դահեկան հանեց ու տվեց իջևանատիրոջն ու ասաց նրան. «Խնամի՛ր դրան և ինչ որ ավել ծախս անես, վերադարձիս կվճարեմ քեզ»»:

Որքա՞ն արժե հյուրասեր լինելը.

1. **Գումար:** Հաճախ մեր պատճառաբանությունը ծախսն է: Այո՛, երբեմն ինչ-որ մեկին վկայելու համար գումար պետք է ծախսենք, բայց մոռանում ենք, որ Տերն ապահովում է մեր բոլոր կարիքները: Անապաշխար մարդկանց ընթրիքի հրավիրելով՝ կարող ենք հող պատրաստել Քրիստոսի սիրո մասին պատմելու համար: Աստված մեր սրտերում որքա՜ն մեծ ուրախություն է դնում, երբ նրանք ընդունում են Հիսուսին՝ որպես Փրկչի: Այդ ժամանակ ծախսը ոչինչ է թվում կորած հոգիների փրկության համեմատ:

2. **Ժամանակ:** Ժամանակ գտեք հյուրասիրություն ցուցաբերելու համար: Շաբաթական 168 ժամ ունենք. երկու ժամով ընկերոջդ տուն հրավիրելը գուցե կյանքեր փոխի, վերքեր բուժի, մխիթարություն և ուրախություն պատճառի: Արդյո՞ք պատրաստ եք ձեր ժամանակը տրամադրելու ինչ-որ մեկին դեպի Քրիստոսը առաջնորդելու համար:

3. **Ջանք:** Այո՛, մենք շատ ջանք ենք գործադրում կյանքում շատ բաների համար, բայց հյուրընկալ լինելու համար ջանք գործադրելը մի բան է, որ Աստված ուզում է տեսնել հավատացյալների մեջ: Տերը կօրհնի ձեր ջանքը և համապատասխանաբար կհատուցի ձեզ:

Նախքան ձեր ընկերներին հրավիրելը աղոթե՛ք ու Տիրոջից իմաստություն խնդրեք: Աղոթե՛ք, որ օրհնություն դառնաք նրանց համար, և նրանք՝ ձեզ համար, զգո՛ւյշ եղեք և համոզվա՛ծ եղեք, որ զրույցը բամբասանքի չի վերածվի, այլ Տերը կփառավորվի այդ ամենի մեջ:

Մի օր ես և տիկինս հրավիրված էինք: Երբ հասանք այնտեղ, տեսանք հրավիրված ուրիշ ընկերներ ևս: Ես սովորաբար աղոթում եմ, որ Տերը վերահսկի մեր խոսակցությունը, և որ մենք փառք բերենք Իրեն: Եվ ահա թե ինչ եղավ ավարտին: Աստվածաշնչից մի հատված կարդացինք, աղոթեցինք, և զրույցը Աստծո Խոսքի շուրջ ընթացավ: Բոլոր ներկաները օրհնվեցին, և Աստված փառավորվեց: Բոլորս տնից դուրս եկանք մխիթարված և օրհնված:

Ե՞րբ եք վերջին անգամ ձեր ընկերներին ընթրիքի հրավիրել:

Հ. Գ.

Հիսուսին հետևել

Մի տիկին հովվին մոտեցավ՝ ասելով.

- Ես այլևս եկեղեցի չեմ հաճախելու:

Հովիվը հարցրեց.

- Կարո՞ղ եմ արդյոք պատճառը հասկանալ:

Տիկինը պատասխանեց.

- Պաշտամունքի ժամանակ տեսնում եմ, որ մարդիկ մտնում են իրենց բջջային հեռախոսների մեջ, ոմանք բամբասում են, ոմանք պարզապես քրիստոնեական կյանքով չեն ապրում... Բոլորն էլ կեղծավոր են:

Հովիվը մի պահ լուռ մնաց և ապա շարունակեց՝ ասելով.

- Շատ լավ... բայց կարո՞ղ եմ ձեզնից մի բան խնդրել նախքան վերջնական որոշում կայացնելը:

Նա ասաց.

- Իսկ ի՞նչ եք ուզում, որ անեմ:

Հովիվը ասաց.

- Մեկ բաժակ ջուր վերցրեք և երկու անգամ շրջե՛ք եկեղեցու մեջ՝ առանց ջուրը հատակին թափելու:

Նա ասաց.

- Այո՛, ես կարող եմ դա անել:

Որոշ ժամանակ անց տիկինը վերադարձավ և ասաց, թե առաջադրանքը կատարված է:

Հովիվը նրան երեք հարց տվեց.

- Ինչ-որ մեկին տեսա՞ք հեռախոսի մեջ մտած:

- Ինչ-որ մեկին տեսա՞ք բամբասանքով զբաղված:

- Ինչ-որ մեկին տեսա՞ք, որ քրիստոնեական սխալ կյանքով է ապրում:

Նա ասաց.

- Ես ոչինչ չտեսա, քանի որ կենտրոնացած էի այս բաժակի վրա, որպեսզի ջուրը չթափվի:

Հովիվը պատասխանեց.

- Երբ եկեղեցի եք գալիս, պետք է նույնքան կենտրոնացած լինեք Աստծո վրա, որպեսզի չընկնեք: Ահա թե ինչու Հիսուսն ասաց՝ «Հետևի՛ր Ինձ»: Նա չասաց՝ քրիստոնյաներին հետևիր: Թույլ մի՛ տվեք, որ Աստծո հետ ձեր հարաբերությունները սահմանվեն ուրիշների՝ Աստծո հետ ունեցած հարաբերություններով: Մտածե՛ք, թե որքանո՞վ եք կենտրոնացած Աստծո վրա:

«Հիսուսին նայելով՝ մեր հավատի Հեղինակին ու Կատարողին» (Եբր. 12:2):

Հիվանդանոցի պատուհանը

Երկու լուրջ հիվանդներ հիվանդանոցի նույն սենյակում էին պառկած: Նրանցից մեկը, օրական մեկ ժամ նստում էր մահճակալին, որպեսզի թոքերի մեջի հեղուկը դատարկվի: Մյուս մարդը պետք է ամբողջ օրը մեջքի վրա պառկեր: Երկուսով ժամերով խոսում էին իրար հետ: Նրանք պատմում էին իրենց ընտանիքների, գործերի, բանակում իրենց ունեցած ծառայության և արձակուրդի ժամանակ այցելած վայրերի մասին:

Ամեն կեսօրից հետո պատուհանի մոտ պառկած հիվանդը, երբ նստում էր, իր ժամանակն անցկացնում էր սենեկակցին նկարագրելով այն ամենը, ինչ տեսնում էր պատուհանից դուրս: Մյուս անկողնում պառկած մարդը, երբ լսում էր այս բաները, շատ էր ուրախանում:

Նստած հիվանդը պատմում էր, որ պատուհանը մի հանրային պարտեզի էր նայում, ուր գեղեցիկ լճակ կար: Բադերը և սագերը ջրում լողում էին, փոքրիկները նավակներով խաղում էին: Սիրահարները թև թևի մտած զբոսնում էին գունագեղ ծաղիկների շուրջ, իսկ հեռվում երևում էր քաղաքի գեղեցիկ հեռանկարը:

Այս ամեն մանրամասնությունները լսելու ժամանակ մյուս անկողնում գտնվող մարդը աչքերը փակում էր՝ երևակայորեն տեսնելու այդ զմայլելի տեսարանները:

Մի տաք օր նա նկարագրեց անցնող մի նվագախմբի: Թեև մյուս հիվանդը չէր լսում նվագախմբին, բայց մտովին տեսնում էր այն ամենը, ինչ բարեկամը բացատրում էր բառերով:

Օրեր և շաբաթներ անցան, և առավոտյան, երբ հիվանդապահուհին ջուր բերեց հիվանդներին, պատուհանին կից գտնվող մահճակալի վրա տեսավ հիվանդի անշնչացած մարմինը: Մարդը խաղաղությամբ մահացել էր քնի մեջ: Բուժքույրը տխրեց և խնդրեց հատուկ աշխատակիցներին, որ վերցնեն տանեն դիակը:

Բաց չթողնելով հարմար ժամանակը՝ մյուս մարդը խնդրեց, որ իրեն պատուհանի մոտի անկողնու վրա փոխադրեն: Հիվանդապահուհին ուրախությամբ կատարեց փոխանակումը և հիվանդին տեղավորելուց հետո նրան առանձին թողեց: Այն ժամանակ հիվանդը զգուշությամբ ցավող մարմնով արմունկի վրա հենվեց և առաջին ակնարկը նետեց դրսի իրական աշխարհին: Նա դժվարությամբ դեմքը շրջեց՝ պատուհանից դուրս նայելու: Բայց ի՞նչ տեսնի . դատարկ մի պատ:

Շատ զարմանքով հարցրեց բուժքրոջը, թե արդյոք ի՞նչն էր ստիպել իր մահացած սենեկակցին, որ այդպիսի հրաշալի բաներ նկարագրի: Հիվանդապահուհին էլ զարմանքով պատասխանեց, թե այդ մարդը աչքազուրկ էր և նույնիսկ պատը չէր կարող տեսնել: Ուստի նա եզրակացրեց՝ ասելով. «Հավանաբար նա ուզում էր քեզ ուրախ պահել և քաջալերել»:

«Ուրեմն, եթե դուք կատարում եք արքայական օրենքը, ինչպես որ Գրքում է գրված, թե՝ «Դրացուդ պետք է սիրես քո անձի պես», լա՛վ եք անում»» (Հակ. 2:8):

Քաղված՝ «Ավետաբեր ձիթենին» գրքից

❊ ❊ ❊

«Եղբայրնե՛րս, այդ բոլորը ուրախություն համարեցե՛ք,
երբ այլևայլ փորձությունների մեջ ընկնեք,
իմանալով, թե ձեր հավատի փորձությունը
համբերություն է առաջացնում:
Սակայն համբերությունը թող կատարյալ արդյունք ունենա,
որպեսզի կատարյալ և ամբողջական լինեք և ոչ մի բանի
պակասություն չունենաք:
Իսկ եթե ձեզանից մեկը իմաստության պակասություն ունենա,
թող խնդրի Աստծուց, որ բոլորին տալիս է առատորեն
և չի հանդիմանում, ու նրան կտրվի»:

Հակ. 1:2-5

«Առանց արյուն թափելու թողություն չկա»

Եբր. 9:22

Միգուցե հարցրել եք ինքներդ ձեզ, թե ինչու են քրիստոնյաները հատուկ նշանակություն տալիս արյանը: Արյան և մահվան մասին միտքը վանողական է շատերի համար, նրանց համար, ովքեր համարում են, որ հավատքը պետք է երջանկացնի և ավելի գրավիչ մի բան առաջարկի մարդկանց:

Աստված շատ գրավիչ առաջարկներ է տալիս՝ հավիտենական կյանք, սեր, ժառանգություն Երկնքում, նաև ուրախություն և խաղաղություն հիմա և հավիտենականության մեջ:

Սակայն յուրաքանչյուր մարդու և Աստծո միջև գոյություն ունի դարերից եկած խնդիր, որը պետք է լուծվի. դա մեղքի խնդիրն է: Եթե ուզում ենք կարգավորել մեր փոխհարաբերությունն Աստծո հետ, պետք է գիտակցենք, որ մեր ամբողջ կյանքը ծանրաբեռնված է մեղքով: Մենք մեղավորներ ենք, դրա համար էլ մեղանչում ենք: Յուրաքանչյուր մեղք պահանջում է աստվածային արդարադատություն, քանի որ «մեղքի վարձը մահ է» (Հռոմ. 6:23):

Ահա այստեղ է բարձրանում արյան հարցը: Արյունը կյանք է նշանակում. այն հոգու խորհրդապատկերն է: Քանի որ մենք կորցրինք կյանքը, մեզ համար պետք է թափվեր կատարյալ, անմեղ զոհի արյուն: Դա է պահանջում Աստծո սրբությունը: Ուրիշ որևէ ճանապարհով փրկություն ստանալն անհնար է: Այդ զոհը եղավ Հիսուս Քրիստոսը՝ Աստծո միածին Որդին: Նրա արյունը թափվեց Գողգոթայի խաչի վրա, որպեսզի Նրա արյան միջոցով իրագործված քավությունով հավատացողները կարողանան ստանալ մեղքերի ներում և հավիտենական կյանք: Հավատալով՝ նրանք կվայելեն Աստծո օրհնությունների հարստությունը՝ լինելով Նրա զավակները և ունենալով Նրա սերը: Նրանց անվտանգությունը հիմնված է Հիսուս Քրիստոսի արյան վրա:

Քաղված

Բարի համբավ

Մարկ. 14:3-9

Մարկ. 14:3-9 համարները խոսում են մի կնոջ մասին, որ Հիսուսի գլխի վրա պատվական յուղ թափեց: Սիմոնի տան մեջ գըտնըվողներից շատերը դժգոհ էին այդ յուղի կորուստի համար և հանդիմանում էին կնոջը՝ ասելով, որ նրա ծախսը կարող էր աղքատներին տրվեր: Սակայն Հիսուսն ասաց, որ թողնեն այդ կնոջը, որովհետև նա բարի գործ էր անում:

Այս համարները կարդալիս նշմարեցի, որ Աստծո զորության ներգործությամբ համբավ ունենալու համար երեք գործնական պայման կա.

1. Ունենալ ներքին առաքինություն, որ Աստծուց է տրվում մեզ:
2. Կիրառել մեր ունեցածը:
3. Խոնարհ մնալ համբավ ունենալուց հետո:

Երբ հետևենք այս կնոջ օրինակին, նախ և առաջ կնկատենք, որ նա անհատական ծառայություն է արել: Նա մարդ չուղարկեց, որ Հիսուսին ծառայի, այլ անձամբ գնաց Հիսուսին ծառայելու: Ուրեմն երբ ծառայություն անելու լինես, ներկայացուցիչ մի՛ փնտրիր: Անձամբ ներկայացրու Քրիստոսին:

Երբ հետևենք այս կնոջ օրինակին, երկրորդը աչքի կընկնի նյութը: Երբ ծառայելու լինես, քո ունեցածից ինչ-որ բան ես տալու: Այս կինը իր ունեցածը տվեց: Կիսաթափանցիկ մարմարե շշի մեջ շատ թանկարժեք օծանելիք ուներ, որ Հիսուսի համար օգտագործեց, և Հիսուսն ընդունեց այն: Հիսուսն ընդունում է այն, ինչ ունես: Մոտեցի՛ր Նրան այնպիսին, ինչպիսին կաս:

Երրորդը աչքի է ընկնում հանրային վկայությունը: Ինչպե՞ս կիրառենք այն, ինչ ունենք: Հանրային վկայությունով: Հաճախ եղել ենք այնպիսի վայրերում, որտեղ առիթ ենք ունեցել Տիրոջը ներկայացնելու, սակայն դժբախտաբար լուռ ենք մնացել: Երբ հոգևոր ընտանիքում լինենք, բնական ենք գտնում Տիրոջ մասին բաժնեկցելը, բայց

կարևոր է, որ դա անենք մեր հոգևոր շրջանակից դուրս նույնպես: Այս կինը չամաչեց և գալով բոլորի առջև՝ այդ ծառայությունը կամ վկայությունը արեց: Հիսուսն ընդունեց այդ ծառայությունը և խոստացավ, որ մինչև մեր օրը այդ կինը պիտի հիշվի: Սա բարի համբավ է:

Այս պատմության մեջ երկու բարի համբավ ունեցող տիպարներ ունենք՝ Հիսուսը և կինը: Ինչպե՞ս Հիսուսը բարի համբավ ուներ: Նախ Նա Աստծուց և մարդկանցից ստացած Իր շնորհը իր սրտում պահելով անցավ. սա ներքին առաքինություն է (Ղուկ. 2:52): Երկրորդը՝ Նա խիստ ժամանակում սկսեց կիրառել դա: Երբ Հիսուսը 30 տարեկան եղավ, գործի լծվեց: Սուրբ Խոսքն ասում է, որ Նա շրջում էր՝ բարիք անելով և Աստծո Խոսքը քարոզելով: Մեր ներքին առաքինությունը ինչպե՞ս կարող ենք ի գործ դնել: Հիսուսի նման գործի լծվելով և կատարելով: Երրորդ՝ Հիսուսը դարձավ խոնարհության տիպար մեզ համար՝ չնայած որ Ինքն Աստված էր և Իրենից բարձրը չկար: Մենք պետք է խոնարհվենք, որովհետև Աստված մեզանից շատ բարձր է: Մեզ սազական չէ հպարտությունը, որովհետև միայն Նա է արժանի ամեն փառքի և պատվի:

Սուրբ Հոգին Պողոս առաքյալի միջոցով մեզ շատ կարևոր խորհուրդ է տալիս: Բ Կորնթ. 10:17-18 համարներն ասում են. «Բայց նա, ով պարծենում է, թող Տիրոջով պարծենա, քանի որ հավանության արժանացողը նա չէ, որ ինքն իրեն է գովաբանում, այլ՝ նա, ում Տերն է գովում»: Թող Աստված քեզ ներկայացնի, Աստծո ներկայացուցիչը եղիր: Թույլ մի՛ տուր, որ ուրիշը, քո առջևից գնալով, քեզ ներկայացնի, որովհետև խոնարհությունդ հպարտության կվերածվի: Ամենամեծ մեղքը, որ Արուսյակը գործեց՝ սատանայի վերածվելն էր իր հպարտության պատճառով:

Ի՞նչ է «բարի համբավ» հասկացողությունը: Այդ սքանչելի ինչք է: Առակ. 22:1-ում կարդում ենք. «Բարի անունը (համբավը) նախընտրելի է, քան մեծ հարստությունը, և շնորհքը՝ քան արծաթն ու ոսկին»: Ուրեմն ներքին առաքինությունը ինչք է: Համբավը պատվի վրա է հիմնված: Բ Կորնթ. 8:18-24-ում ուրիշ օրինակ ենք կարդում եղբոր բարի համբավի մասին: Նաև Դան. 6:4-ում կարդում ենք, որ

չարերը ատում են բարի համբավը. «Հրամանատարներն ու կուսակալները կառավարության վերաբերյալ հարցերում մի առիթ էին փորձում գտնել Դանիելի դեմ, բայց ոչ մի դեպք կամ սխալ չկարողացան գտնել, որովհետև հավատարիմ էր, ու ոչ մի սխալ կամ հանցանք չգտնվեց նրա վրա»:

Կան նաև «համբավներ», որոնք Աստծուց չեն և վնասներ են հասցնում:

Ա. Տիեզերական գովասանքը: Ղուկ. 6:26-ում Հիսուսն ասաց. «Վա՜յ ձեզ, երբ բոլոր մարդիկ լավ խոսեն ձեր մասին, քանի որ այդպես էին անում նրանց հայրերը սուտ մարգարեներին»:

Բ. Փաղաքշական խոսքերը: Պետք է հեռու մնալ նրանցից, ովքեր կեղծ գգվում են ձեզ: Հռոմ. 16:18. «Որովհետև այդպիսիները մեր Տեր Հիսուս Քրիստոսին չեն ծառայում, այլ՝ իրենց որովայնին: Եվ քաղցր խոսքերով ու գովեստներով խաբում են պարզամիտների սրտերը»:

Գ. Աշխարհային ընկերակցությունը: Հակ. 4:4-ում գրված է. «Ով ուզում է աշխարհի բարեկամը լինել, իրեն դարձնում է Աստծո թշնամի»:

Դ. Անհոգության առարկա դառնալը: Երբ Աստվածային համբավ չէ ունեցած համբավդ, Գաղ. 2:6-ում գրված է. «Բայց նրանք, ովքեր երևելիներ էին համարվում, (թե ինչպիսիք էին նրանք, իմ գործը չէ, Աստված մարդկանց մեջ աչառություն չի դնում), այն մեծ համարվողները իմ ասածին ոչինչ չավելացրին»: Պողոս առաքյալն ուզում է ասել, թե այդ երևելիների ասածները Ավետարանի ճշմարտությանը հակառակ էին և իրենց մասին մեծ կարծիք ունեին: Ոչ աստվածային համբավներ են սրանք, և Աստված այսպիսի բաներից զզվում է:

Հիսուսը բարի գործեր արեց, որպեսզի պատիվը Աստծուն ուղղվի: Մաքուր կենցաղ ունեցավ, որովհետև Աստծո ներկայացուցիչն էր և խոնարհ կյանք ապրեց:

Ուզո՞ւմ ես բարի համբավի տեր դառնալ, ուզո՞ւմ ես քո պատճառով Տիրոջ անունը փառավորվի և ոչ թե հայհոյվի: Ուրեմն պետք է լինես խոնարհ, պատրաստակամ, հոժարակամ Տիրոջ կողմից գոր-

ծածվելու համար: Ինչպես Հայր Աստված գործածեց Քրիստոսին, Սուրբ Հոգին էլ Իր Խոսքի միջոցով գործածեց այս կնոջը, որպեսզի մեզ համար օրինակ լինի:

Ներսես եղբ. Պոյաճյան

❊ ❊ ❊

Տասը պատվիրաններից այն կողմ

- Մի՛ մտահոգվիր... մտահոգվելը ապարդյուն է (Սաղ. 55:22, Փիլ. 4:6-7):
- Մի՛ վախեցիր... քո վախերից շատերը չեն իրականանալու (Բ Տիմ. 1:7):
- Երբ որևէ հարցի առջև լինես, այդ ժամանակ մտածիր դրա մասին (Մատթ. 6:34, Հակ. 4:13-15):
- Օրը օրին ապրի՛ր և բեռդ կրի՛ր (Մատթ. 6:34, Հակ. 4:13-15):
- Հանգիստ քնի՛ր – խնդիրներդ անկողին մի՛ տար (Եփես. 4:26-27, Կող. 3:8-10):
- Աշխարհի դժվարությունները կրել մի՛ ջանա (Հռոմ. 14:12):
- Լավ լսող եղի՛ր... ուրիշների ասածին ուշադրություն դարձրո՛ւ (Հակ. 1:19-20):
- Երեկվա մասին մի՛ մտածիր... այս օրը ապրի՛ր և ուրա՛խ եղիր (Սաղ. 118:24, Բ Կորնթ. 5:17):
- Դժգոհության հոգին մարի՛ր, ինքդ քեզ մի՛ խղճա (Սաղ. 42:11):
- Ամեն օր օրհնություններդ թվարկի՛ր (Սաղ. 103:1-5):

Քաղված՝ «Ավետաբեր ձիթենին» գրքից

Թասերի դատաստանն ու Բաբելոնի անկումը (3)

4.1 Աստծո բարկության չորրորդ թասը

«Չորրորդ հրեշտակն իր թասը արևի վրա դատարկեց. ու նրան զորություն տրվեց, որ մարդկանց խորշակահար անի կրակով» (Հայտ. 16:8):

Մենք արդեն տեսանք, որ երրորդ թասի դատաստանը մարդկանց կզրկի քաղցրահամ ջրից: Եվ հիմա 4-րդ թասի դատաստանը մարդկանց խորշակահար է անելու: Առանց քաղցրահամ ջրի՝ մարդիկ պարզապես չեն կարողանալու զովանալ:

Կարելի է ակնկալել, որ մարդիկ Աստծո դատաստանները փորձառելուց հետո կապաշխարեն և Նրանից ողորմություն կհայցեն, բայց ոչ. «Նրանք անիծեցին Աստծո անունը, ով վերահսկում էր այս պատուհասները, սակայն նրանք հրաժարվեցին ապաշխարել և փառաբանել նրան» (Հայտ. 16:9):

4.2 Աստծո բարկության հինգերորդ թասը

«Հինգերորդ հրեշտակն իր թասը գազանի աթոռի վրա դատարկեց, ու նրա թագավորությունը խավարեց, և ցավից իրենց լեզուներն էին ծամծմում» (Հայտ. 16:10, հմմտ. Հայտ. 8:12, 9:1-5, Ելից 10:21-29): Մովսեսի օրոք խավարի պատուհասը երեք օր տևեց: Դա լիակատար խավար էր, խավար, որը կարելի էր զգալ: Այն, ինչ մենք նկարագրել ենք այստեղ հինգերորդ թասի դատաստանի առնչությամբ, շատ ավելի վատ կլինի, քան Եգիպտոսի պատուհասը, և շատ ավելի վատ, քան հինգերորդ փողի դատաստանը, որտեղ խավարն առաջացել էր ծխից:

Գրված է, որ 5-րդ թասը թափվում է գազանի աթոռի, այսինքն՝ վերածնված Հռոմեական կայսրության կենտրոնի վրա: Ավելի վաղ նրանք, ովքեր երկրպագեցին սատանային ու գազանին, Աստծուն փորձեցին՝ հարցնելով. «Ո՞վ կա այս գազանին նման, և ո՞վ է, որ կա-

րող է դրա դեմ պատերազմել» հարցը (Հայտ. 13:4): Նրանք այժմ ունեն իրենց պատասխանը. ողջ կայսրությունը նետված է խավարի և քաոսի մեջ: Կրկին կարդում ենք, որ նրանք դեռ չեն ապաշխարի: «Ցավից իրենց լեզուներն էին ծամծմում ու երկնքի Աստծուն հայհոյեցին իրենց ցավերի և իրենց պալարների պատճառով, և իրենց գործերից չապաշխարեցին» (Հայտ. 16:10-11): Այս ամենը որոշ չափով պատկերում է, թե ինչ է լինելու կրակի լճում՝ մի վայր, որը բնութագրվում է խավարով, լացով և ատամների կրճտոցով (հմմտ. Մատթ. 25:30, Ղուկ. 16:22-25):

4.3 Աստծո բարկության վեցերորդ թասը

«Վեցերորդ հրեշտակն իր թասը մեծ գետի՝ Եփրատի վրա դատարկեց, և նրա ջրերը ցամաքեցին, որպեսզի Արևելքի թագավորների ճանապարհը պատրաստվի» (Հայտ. 16:12, հմմտ. Հայտ. 9:13-15):

Եփրատ գետը կարևոր գետ է աստվածաշնչյան պատմության և մարգարեությունների մեջ: Դա այն չորս գետերից մեկն էր, որոնք հոսում էին Եդեմի պարտեզից (Ծննդ. 2:10-14): Այն հաճախ ծառայել է որպես բաժանարար գիծ արևելքի և արևմուտքի միջև, և վերջնական ընդլայնված Իսրայելը կտարածվի Եգիպտոսի հովիտից մինչև Եփրատ գետը: Սակայն վեցերորդ թասի դատաստանը կվերացնի այս բաժանարար գիծը, այնպես որ արևելքի թագավորներն իրենց հրոսակներով ազատ անցում կունենան դեպի Իսրայելի երկիր:

Նկատեք, որ այս հրոսակները հեթանոսներից կլինեն: Հատկանշական է, որ 1961թ.-ին Չինաստանի զինված աշխարհազորայինները գնահատվում էին 200 միլիոն: Իսրայելի ժողովուրդը կվերադառնա հիմնականում արևմուտքից, հյուսիսից և հարավից, և նրանցից ոմանց նման ձևով կտրվի ազատ անցում, ոչ թե Եփրատով, այլ Նեղոս գետով (տե՛ս Ես. 11:15-16):

Հայտ. 16:13-14-ից սովորում ենք, որ սատանան երկու գազաններին (սատանայից ներշնչված խիստ չար մարդիկ) կօգտագործի իր կամքը կատարելու համար, և այս երեքից դուրս կգան գորտերի պես չար ոգիներ, որոնք հրաշքներ կգործեն, և կգան ամբողջ աշխարհի թագավորների մոտ՝ համոզելով նրանց գնալ Իսրայելի դեմ մեծ ճակատամարտի՝ Արմագեդոնի ճակատամարտի (Հայտ. 16:16):

Սատանան կարծես թե չի գիտակցում, որ ինքը գործիք է ամենակարող Աստծո ձեռքում: Նրա գաղափարն է հավաքել աշխարհի բոլոր բանակները՝ Իսրայելին ջախջախելու և վերջին փորձով Քրիստոսին հաղթելու ու աշխարհն իրեն ենթարկելու համար: Սակայն սաղմոսերգուի խոսքերով ասած՝ «Երկնքում գահակալը ծիծաղում է: Տեր Եհովան ծաղրում է նրանց... ասելով. «Իմ Թագավորը իմ սուրբ բլրի Սիոնի վրա եմ դրել»» (Սաղ. 2:4-6):

Տեսիլքի այս կետում Տեր Հիսուսն ասում է. «Ահա ես գալիս եմ գողի պես: Երանի նրան, ով արթուն է մնում և իր զգեստները պահում է իր մոտ, որպեսզի նա մերկ չմնա և ամոթխած չհայտնվի» (Հայտ. 16:15): Այստեղ Տեր Հիսուսը մեզ ասում է, թե ինչպես է Ինքը գալու: Այդ վերջին օրերում ճշմարիտ հավատացյալների համար որքա՜ն կարևոր է մաքուր ու Քրիստոսին նվիրված մնալը և ոչ մի կերպ սատանայի ծրագրերից չազդվելը: Ինչպես Պողոս առաքյալն է գրում՝ ասելով. «Տիրոջ օրը կգա, ինչպես գողի գիշերը: Մինչ մարդիկ ասում են՝ «Խաղաղություն և ապահովություն», նրանց վրա հանկարծակի կործանում կգա...» (Ա Թես. 5:2-3): Եվ մեզ համար, որ ճշմարիտ հավատացյալներ ենք այսօր, նույնքան կարևոր է, որ պատվենք Տիրոջը մեր ապրելակերպով և այդպիսով լավ վկայություն լինենք շրջապատի համար:

4.4 Աստծո բարկության յոթերորդ թասը

«Յոթերորդ հրեշտակը իր թասը դատարկեց օդի մեջ, ու երկնքի տաճարից, գահից մի ուժգին ձայն հնչեց՝ ասելով. «Եղավ»» (Հայտ. 16:17): Իսկ Հայտ. 15:1-ում կարդում ենք. «... Նրանց միջոցով էր ավարտվում Աստծո բարկությունը»: Սա մեզ վառ կերպով հիշեցնում է այն խոսքերը, որոնք Հիսուսն ասաց, երբ խաչի վրա էր. «Կատարվեց» (Հովհ. 19:30): Այնտեղ Նա հայտարարում էր, որ փրկագնման մեծ գործն ավարտված է, բայց այժմ գահից բարձր ձայնը հայտարարում է, որ ավարտված է Աստծո բարկությունը չզոջացող աշխարհի վրա:

12-րդ գլխից սովորեցինք, որ Մեծ նեղության կեսին սատանան կվտարվի երկնքից: Այժմ մենք իմանում ենք, որ նա օդից դուրս է շպրտվելու, որտեղ եղել էր իշխան (Եփես. 2:2), և շուտով կիմանանք,

որ նա կնետվի անդունդը և 1000 տարով կփակվի (Հայտ. 12:9, 20:2-3):

Հինգերորդ թասը թափվեց գազանի աթոռի վրա, իսկ յոթերորդ թասը թափվեց կարծես սատանայի աթոռի վրա: Այլևս նա գնալու տեղ չի ունենա: Նրան կբռնի հրեշտակը և կնետի անդունդի մեջ:

Յոթերորդ թասով բարձր ձայն է լսվում, որն ասում է. «Եղավ»: Աստծո բարկությունն ավարտված է, և հաջորդ համարները որոշակի նկարագրում են, թե ինչպես է այն իրագործվում: Սկզբում կլինի մեծ երկրաշարժ, այնպիսին, որի նմանը դեռևս մարդկանց երկրի վրա գտնվելուց ի վեր չէր եղել: Այն այնքան ահարկու կլինի, որ երեք մասի կբաժանի մեծ քաղաքը ու կկործանի ազգերի քաղաքները: Ամբողջ աշխարհում ավերածություններ կլինեն: Այն ամենը, ինչ մարդը զարգացրել է իր հպարտության, ամբարտավանության և Աստծուն անհնազանդության մեջ (պատկերված է որպես Մեծ Բաբելոն, որի կենտրոնը Հռոմն է), կկործանվի՝ ճանապարհ նախապատրաստելու Նրա համար, ում իրավունքն է թագավորել ամբողջ երկրի վրա (Զաք. 14:9):

Ոչ միայն հզոր երկրաշարժ կլինի, այլև սարսափելի կարկուտ՝ յուրաքանչյուրը մոտ 50 կգ կշռող կարկտաքարերով: Եվ այնուամենայնիվ, այս ամենը մարդկանց չի բերի ապաշխարության. նրանք կհայհոյեն Աստծուն կարկուտի պատճառով:

Պետք է նշել, որ կան մի քանի տեսակետներ, թե ինչ են նշանակում այս և հաջորդ գլուխներում նշված տարբեր եզրույթները: Օրինակ՝ 19-րդ համարի մեծ քաղաքը, ոմանց կողմից մատնանշվում է որպես Բաբելոնը: Հայտ. 11:8-ում «մեծ քաղաք» արտահայտությունը հստակորեն վերաբերում է Երուսաղեմին, բայց այստեղ Հայտ. 16:19-ում խելամիտ է թվում «մեծ քաղաքը» հասկանալ որպես Հռոմ: Այնուհետև կարդում ենք, որ «ազգերի քաղաքները կործանվեցին», և դա ներառում է Բաբելոնը:

Ոմանք սովորեցնում են, որ Բաբելոնը վերաբերում է Հռոմին՝ յոթ գլուխներով քաղաքին (Հայտ. 17:9), իսկ ոմանք էլ սովորեցնում են, որ դա վերաբերում է Իրաքի Բաբելոն քաղաքին: Սակայն կարդում ենք. «Ո՛վ ՏԵՐ, Դու խոսեցիր այս տեղի մասին, որ այն ոչնչացնես, որ դրանում բնակվող չլինի՝ մարդուց մինչև անասուն, այլ հավիտյան ավերակ լինի»: Եվ թող լինի, երբ վերջացնես այս գրքի ընթերցումը,

մի քար կապես դրան ու Եփրատի մեջ գցես՝ ասելով. «Այսպես պիտի ընկղմվի Բաբելոնը և այլևս չի բարձրանալու այն չարիքի հետևանքով, որ Ես բերելու եմ նրա վրա, և նրանք պիտի մաշվեն»: Երեմիայի խոսքերը մինչև այստեղ են» (Երեմ. 51:62-64): Մենք հավատում ենք, որ Տեր Եհովան դա կատարեց Պարսկաստանի Կյուրոս թագավորի միջոցով, և հետևաբար եզրակացնում ենք, որ Բաբելոնը հատուկ կերպով վերաբերում է Հռոմին:

QMBC պանորամա

(շարունակելի)

Տիտանիկը

Արդյո՞ք դիտել եք «Տիտանիկ» ֆիլմը: Ինձ գրավել էր, այսպես կոչված, չխորտակվող նավի և դրանով ճանապարհորդող մարդկանց պատմությունը: Ֆիլմում հատկապես մի տեսարան կար, որը չեմ կարողանում մոռանալ. Ատլանտյան օվկիանոսում կեսգիշեր է: Ծովը կատարյալ հանգիստ է: Աստղերը փայլում են դաժան, ցուրտ գիշերվա մեջ: «Տիտանիկը» ամբողջ հզորությամբ առաջ է ընթանում, չնայած որ նավապետին զգուշացրել էին սառցալեռների մասին: Սա պարզապես ծովային ճամփորդություն չէր, այն նաև էգոյի ճամփորդություն: Երբ դիտորդ-նավաստիները նկատեցին իրենց առջև գրտնվող սառցալեռը, շարժիչների աշխատանքը հակադարձեցին, և ղեկը շրջեցին: Բայց հսկայական նավը շրջելու համար ժամանակ էր պահանջվում: Սառեցնող լռություն և անհանգստություն էր տիրում, քանի որ նավը շարունակում էր ընթանալ սեփական արագությամբ դեպի վերամբարձ սառցալեռը: Թանկարժեք վայրկյաններն անցնում էին, երբ անձնակազմը սարսափած հայացքով հետևում էր՝ մտածելով, թե արդյոք ղեկը ժամանակին կշրջի նավը՝ բախումից խուսափելու համար: Ղեկը, որը չափազանց փոքր էր հսկայական նավի համեմատ, կամաց-կամաց նավի ուղղությունը թեքեց, սակայն «Տիտանիկը» չկարողացավ բավական արագ փոխել ուղղությունը: Սառցալեռը բախվեց նավի մի կողմին՝ մեծ ճեղք առաջացնելով, ինչի

արդյունքում ուղևորների և անձնակազմի մեծ մասը մահացան: Նավը, որի մասին մարդիկ պնդում էին, թե նույնիսկ Աստված չի կարող խորտակել, անցավ Ատլանտյան օվկիանոսի հատակը:

Ես չեմ ուզում հոռետեսի տպավորություն թողնել, բայց իրական իրադարձության այս ցնցող վերստեղծումը ստիպեց ինձ լավ մտածել մեր՝ որպես անհատների կամ եկեղեցիների՝ անհրաժեշտության պարագայում ուղղությունը շուտ փոխելու ունակության մասին: Հետաքրքրքրական է, թե որքան հաճախ ենք դժկամություն դրսևորում փոխվելու հանդեպ՝ զուտ մարդկային էգոյի պատճառով: Դժվար է խոստովանել, որ այն, ինչ մինչև այս պահը արել ենք, այլևս տեղին չէ: Գուցե մենք չենք կարող բավական արագ ուղղությունը փոխել՝ անցյալում ստեղծած արագության (թափի) և «միշտ այսպես ենք արել» պատճառաբանության պատճառով: Որոշ եկեղեցիներ խորտակվեցին, քանի որ չկարողացան բավական արագ փոխել իրենց ուղղությունը, երբ ակնհայտորեն անհրաժեշտ էր դա, կամ, ինչպես «Տիտանիկը», շատ ուշ փոխեցին: Ինչպես նավաստի-դիտորդների խումբը, որոնց գործն էր անընդհատ առաջ նայելը, պարզապես չունեին հեռուն տեսնելու ունակությունը:

Եկե՛ք խորաթափանց լինենք. երբեմն թվացյալ հավատարմությունը ոչ այլ ինչ է, քան անճկունություն ու նորի կամ տարբերի հանդեպ վախ: Աստվածաշունչը շատ հստակ ընդգծում է, թե որոնք են անսակարկելի ճշմարտությունները, բայց մեզ նաև տրված է այդ ամենը ներկայացնելու և կիրառելու մեծ ճկունություն:

Քրիստոսը ծառայության սկզբնական շրջանում սովորեցնում էր ժողովարանների ավանդական միջավայրում: Ժամանակի ընթացքում Նա մերժվեց հուդայական իշխանությունների կողմից: Քրիստոսը ժողովարաններում այլևս ողջունելի չէր: Նա նոր միջոցներ գտավ: Նա սկսեց սովորեցնել դաշտերում, շուկաներում և նույնիսկ նավակի մեջ: Երբ փոփոխություն մտցնելը խթանում էր Նրա աշխատանքի առաջխաղացմանը, Նա երբեք չէր վարանում:

Ջոն Ուեսլին սկզբում սարսափեց, երբ Ջորջ Ուայթֆիլդը իրեն գրեց՝ առաջարկելով բաց երկնքի տակ քարոզել: Ուեսլին գրեց. «Հոգիների փրկությունը գուցե մեղք սեպեի, եթե եկեղեցու պատերից ներս չլի-

ներ»: Փոփոխության պատրաստակամությունը կարևոր գործոն էր նրա կյանքի ու ծառայության աճի համար: Այն նույնքան կարևոր է մեզ համար: Փոփոխությունները տարօրինակ են թվում, բայց միշտ այդպես է, երբ սկսում ենք այլ կերպ գործել:

Ի՞նչ փոփոխությունների է հրավիրում Աստված մեզ այս պահին մեր անձնական և եկեղեցական կյանքում: Պատասխանի առաջին քայլը նշված է Հայտնության գրքի 7 եկեղեցիներին ուղղված նամակներից յուրաքանչյուրում. «Ով ականջ ունի, թո՛ղ լսի, թե Հոգին եկեղեցիներին ինչ է ասում» (Հայտ. 2:7): Ի՞նչ է ասում Հոգին Իր Խոսքի միջոցով այս պահին: Փոփոխության մասին մտածելիս մեծ հարցը, որը պետք է տանք ոչ թե «Արդյո՞ք մենք միշտ այսպես ենք արել» հարցն է, այլ «Արդյո՞ք Աստված է առաջնորդողը»:

Եթե Աստված է առաջնորդողը, ուրեմն վախենալու ոչինչ չկա:

Ռեքս Տիրլավ

❊ ❊ ❊

1. *Որդի՛ս, ուշադրությո՛ւն դարձրու իմ իմաստությանը, ականջդ խոնարհի՛ր իմ խորըմբռնմանը,*
2. *որպեսզի խոհեմությունը կարողանաս գնահատել, ու շուրթերդ գիտություն պահեն:*
3. *Քանի որ օտար կնոջ շուրթերից խորիսխի մեղր է կաթում, ու նրա բերանը յուղից էլ փափուկ է.*
4. *բայց նրա վախճանն օչինդրի պես դառն է, երկսայրի սրի պես հատու:*
5. *Նրա ոտքերը դեպի մահն են տանում, ու նրա քայլերը դժոխքում են կանգ առնում,*
6. *որ հանկարծ կյանքի շավղի մասին չխորհես. նրա ուղիները փոփոխական են, այնպես որ չես կարող դրանք ճանաչել:*

Առակաց 5:1-6

Հնազանդվե՞լ, թե՞ չհնազանդվել

Ղուկ. 6:46-49

«Եվ ինչո՞ւ եք ինձ «Տե՛ր, Տե՛ր» կոչում և չեք անում այն, որ ասում եմ» (Ղուկ. 6:46):

Լավ հարց է, այնպես չէ՞: «Տեր» բառը նշանակում է նաև ղեկավար: Այդ դեպքում Հիսուսը պետք է ամբողջությամբ ղեկավարի մեր կյանքը: Մենք Նրան ենք պատկանում և պետք է անենք այն, ինչ Նա է ասում:

Արդյո՞ք ես ու դու հենց դա էլ անում ենք. դժվար հարց է, այնպես չէ՞: Եթե Հիսուսին Տեր ենք անվանում, բայց չենք հնազանդվում Նրան, ապա հակասություն է ստեղծվում: Նրան միայն որպես Տեր ընդունելը բավական չէ: Աստծո հանդեպ ունեցած ճշմարիտ սերն ու հավատը հնազանդություն են պահանջում:

Գերմանիայի Լյուբեկ քաղաքի մայր տաճարում փորագրված են հետևյալ խոսքերը.

- Այսպես է ասում մեր Տեր Քրիստոսը.
- Դուք Ինձ Տեր եք անվանում ու չեք հնազանդվում Ինձ,
- Դուք Ինձ լույս եք անվանում ու չեք տեսնում Ինձ,
- Դուք Ինձ ճանապարհ եք անվանում ու չեք քայլում դրանով,
- Դուք Ինձ կյանք եք անվանում ու չեք ապրում այն,
- Դուք Ինձ իմաստուն եք անվանում ու չեք հետևում Ինձ,
- Դուք Ինձ ազնիվ եք անվանում ու չեք սիրում Ինձ,
- Դուք Ինձ հարուստ եք անվանում ու ոչինչ չեք խնդրում,
- Դուք Ինձ հավիտենական եք անվանում ու Ինձ չեք տեսնում,
- Եթե Ես դատապարտեմ ձեզ, Ինձ չմեղադրեք:

Հիսուսին ամենաշատը վշտացնում էր կեղծավորությունը: Նա կրոնական կեղծավոր առաջնորդներին ասում է. «Վա՜յ ձեզ՝ դպիրներ և փարիսեցիներ՝ կեղծավորներ, որ մաքրում եք բաժակի և պնակի դրսի

կողմը, բայց ներսանց լիքն եք հափշտակությունով և անիրավությունով» (Մատթ. 23:25):

Իր հետևորդներին Նա ասում է. «Ոչ թե ինձ ամեն «Տե՛ր, Տե՛ր» ասողը կմտնի երկնքի արքայությունը, այլ Նա, ով կատարում է Իմ Հոր կամքը, որ երկնքում է» (Մատթ. 7:21):

Այս շատ կարևոր ճշմարտությունը մարդկանց հասանելի դարձնելու համար Հիսուսը պատմեց տուն կառուցող երկու մարդկանց մասին պատմությունը (Մատթ. 7:24-27):

Այդ մարդկանցից առաջինն իմաստուն է: Իմաստուն է նա, ով մոտենում է Քրիստոսին՝ փրկությանը, հնազանդվում է, լսում նրա խոսքերը և կիրառում: Այդպիսի մարդն իր կյանքը կառուցում է աստվածաշնչյան սկզբունքներով: Դա է կյանք կառուցելու ճիշտ ձևը: Երբ կյանքի ջրհեղեղներն ու քամիները հարվածեն, այդ տունն ամուր կմնա, որովհետև կառուցված է վեմի՝ Քրիստոսի ու Նրա ուսմունքի վրա:

Մյուս մարդն անմիտ է: Անմիտ է նա, ով լսում է Աստծո խոսքերը, բայց չի հետևում դրանց և չի հնազանդվում: Նա իր կյանքը կառուցում է իր պատկերացրած լավագույն հիմքի վրա՝ հետևելով աշխարհիկ սկզբունքներին: Երբ կյանքի փոթորիկներն ուժգնանան, նրա տունը, որն ամուր հիմք չունի, կփլվի և հավիտյան կկորչի:

Դատաստանի օրը, երբ մարդիկ կանգնեն Քրիստոսի առաջ, շատերը նրան կհիշեցնեն, որ իրենք եղել են կրոնավոր, եկեղեցիների ակտիվ անդամներ: Նրանք կթվարկեն իրենց գործած հրաշքները և կպատմեն, թե ինչպես են մարգարեացել ու Հիսուսի անունով դևեր հանել: Սակայն նրանց բողոքներն ու աղերսները ապարդյուն կլինեն: Հիսուսը պարզապես նրանց կասի. «Ես ձեզ բնավ չեմ ճանաչում, հեռո՛ւ գնացեք ինձանից, չարագործնե՛ր»:

Եթե լսում ես Աստծո խոսքերը և կատարում դրանք, ապա նման ես այն իմաստուն մարդուն, որն իր տունը վեմի վրա կառուցեց: Քո կյանքն ամուր հիմք կունենա, և դու չես ընկնի, երբ փոթորիկներ սկսվեն, որովհետև Հիսուսն է ամուր վեմը:

Վեր. Հովսեփ Հովսեփյան

Մի՛ սիրեք աշխարհը

Ա Հովհ. 2:15-17

Մի՛ սիրեք աշխարհը: Երեք բառ, որոնք բավարար են մեր մեջ տագնապալի մտքեր ու հույզեր առաջացնելու, մինչ Աստծո Հոգին կգնի յուրաքանչյուրիս միտքը, սիրտն ու կյանքի ընթացքը: Երեք բառ, որն ամենազորավոր քարոզից էլ բարձր են խոսում: Դրանք հանդիմանում են և՛ շարքային հավատացյալին, և՛ հոգևոր փորձառու ծառայողին: Երեք բառ, որոնք լսելիս Աստծո առաջ կանգնելու մեր համարձակությունը խարխլվում է, մեր երեսը երկինք ուղղած ու ձեռքերը վեր պարզած աղոթելու խիզախությունը կորչում է, քանի որ բոլորս էլ թերացել ենք ու թերանում ենք այս պատվերը կատարելու հարցում:

Մենք ոչ միայն թերանում ենք, այլև կոպտորեն կոտրում ենք այն: Ամբարտավանությամբ Աստծո սրբության չափանիշը իջեցնում ենք՝ այն հավասարեցնելով մարդկայինին, անամոթաբար հաշտվում ենք այն մտքի հետ, որ հնարավոր է և բոլորովին ընդունելի է 21-րդ դարի քրիստոնյայի համար սիրել և՛ աշխարհը, և՛ Հորը: Սա մի բան է, որի հետ Հովհաննես առաքյալը կտրականապես անհամաձայն է: Նա ասում է. «Եթե մեկը սիրում է աշխարհը, Հոր սերը նրա մեջ չէ»:

Ո՞ւմ մեջ չկա Հոր սերը: Նրա մեջ՝

- ում հաճելի է այս աշխարհի համակարգը, դրվածքը, կարգուկանոնը, սկզբունքները,
- ում հոգեհարազատ են այս աշխարհի հաճույքները, բարձունքները, փառքը, հարստությունը:

Հակոբոսը մի քիչ ավելի խիստ է ասում.

«Ով ուզում է աշխարհի բարեկամը լինել, ինքն իրեն թշնամի է դարձնում Աստծուն»:

Մենք կանչված ենք Աստծո բարեկամները կոչվելու:

Մի՛ սիրեք աշխարհը: Այնքան պարզ խոսք, որը հեշտ է մոռացվում

լսելու ականջ չունեցողի կողմից, բայց նա, ով ուզում է լսել ու իր անձը խոնարհեցնել, Աստծո առաջ շնորհք կգտնի, թեև երկար ժամանակ թողել է իր առաջին սերը ու աշխարհն է սիրել:

Շատերս երևի կմտածենք, որ այս խոսքը մեզ համար չէ կամ ընդհանրապես մեր եկեղեցուն չի վերաբերում: Բայց եկեք հիշենք Նաթան մարգարեի՝ Դավթին ասած խոսքը: Մարգարեն մի պատմություն էր պատմել Դավթին, որը բարկացրել էր նրան: Այդ բարկությամբ լցված՝ նա ուզում էր պատժել այն անձին, ով Նաթանի պատմության մեջ անարդար էր վարվել: Դավթի մտքով չէր անցել, որ Նաթանը այդ պատմությամբ հենց իրեն նկատի ուներ:

Մարգարեն, առանց թագավորից վախենալու, մի կարճ խոսք ասաց. «Այդ անձը դու ես»:

Դու քո մտքում մի՛ ասա՝ ես չես սիրում աշխարհը, մեռած ես աշխարհի համար, աշխարհն էլ քեզ համար: Ընդունի՛ր, որ աշխարհը լավ էլ ապրում է քո հաշվարկներում, առօրյայում, մտածելակերպում, փափագներում, սրտում:

Երբ անձդ քննես ու տեսնես, որ հաճախ վարվում ես կամ հավանություն ես տալիս աշխարհի մարդկանց վարվելակերպին կամ ձրգտում ես այնպիսի բաների, որոնց աշխարհի մարդիկ են ձգտում, ուրեմն հաստատ իմացի՛ր, որ այս պատգամը քեզ համար է:

Խոնարհություն է պետք ընդունելու համար: Սակայն եթե Սուրբ Հոգին չլուսավորի մարդու միտքը, անձը չի տեսնի, որ իրականում ինքը սիրում է աշխարհը իր բոլոր գույներով ու երանգներով:

Իսկ ինչո՞ւ չեմ կարող սիրել և՛ Հորը, և՛ աշխարհը:

Ինչպես զինվորը չի կարող և՛ պաշտպանել իր հայրենիքը, և՛ միանալ թշնամուն իր հայրենիքի դեմ պատերազմելիս, նույնպես ես չեմ կարող սիրել և՛ Հորը, և՛ աշխարհը: Մեկը մյուսի հակառակն է: Դա կոչվում է դավաճանություն, ուրացում: Հոգևոր բառապաշարով ասած՝ ուխտադրժություն:

Պողոսն ասել է: «Ո՛չ մի պատերազմող իրեն այս կյանքի գործերի մեջ չի խճճում, որպեսզի հաճելի լինի նրան, ով իրեն ընտրել է զին-

վոր լինելու համար: Եվ եթե մեկը մրցում է, պսակ չի ստանա, եթե օրինավոր չմրցի» (Բ Տիմ. 2:4-5):

Թող ոչ ոք չխաբի ձեզ՝ ասելով, թե հոգևոր կյանքը ինչպես կուզես ապրի, միևնույն է, վերջում վարձք կստանաս: Ինչպես մարզիկը պսակ չի ստանա, եթե օրինավոր չմրցի, թեկուզ և հաղթել է բոլորին, նույն կերպ էլ հավատացյալը վարձք չի ստանա, եթե իր երկրավոր կյանքն անցկացրել է մեկ Հորը սիրելով, մեկ՝ աշխարհը:

Իսկ ինչո՞ւ է Հովհաննեսը նման պատվեր տալիս: Ընթերցված հատվածում երկու պատճառ է նշվում, բայց կարելի է ուրիշ պատճառներ ևս մեջբերել:

1. Քանի որ այն, ինչ աշխարհը մատուցում է, Հորիցը չէ:
2. Քանի որ այն, ինչ աշխարհից է, ժամանակավոր բնույթ ունի: Աշխարհն էլ կանցնի, նրա ցանկությունն էլ: Խելամիտ չէ ժամանակավորը սիրել ու բաց թողնել հավիտենականը:
3. Քանի որ մենք այս աշխարհից չենք:

Հովհ. 15:19-ում Հիսուսն ասում է. «Եթե աշխարհից լինեիք, աշխարհն իրենը կսիրեր, բայց որովհետև դուք աշխարհից չեք, այլ Ես ձեզ աշխարհից դուրս ընտրեցի, դրա համար աշխարհն ատում է ձեզ»:

Իսկ Հովհ. 17-ում 2 անգամ շեշտվում է նույն միտքը: Այն գրված է 14 և 16-րդ համարներում: Աշակերտների մասին խոսելիս Հիսուսն ասում է. «Նրանք աշխարհից չեն, ինչպես Ես աշխարհից չեմ»:

4. Քանի որ մենք պանդուխտ և օտարական ենք, ինչպես Պետրոս առաքյալն է ասում: Իսկ ի՞նչ եք կարծում, արդյոք իսրայելացի քանի՞ ընտանիք կամ անհատ կնախընտրեր այլ ազգի միանալ և նրանց երկրում հաստատվել, եթե ճանապարհորդությունը ոչ թե անապատի միջով լիներ, այլ գյուղերի ու քաղաքների, որտեղ բնակիչները թշնամաբար չէին վարվի իրենց հետ: Կարծում եմ՝ շատ շատերը Մովսեսին ու Ահարոնին կասեին. «Մենք կաթ ու մեղր բխող երկիր չենք գնա: Մեր աչքերը տեսան այս գեղեցիկ արոտավայրերը, շինությունները, բարեկիրթ, մարդասեր, արդար, բոլորի կարծիքներն ու կրոնները ընդունող մարդկանց, ուստի այստեղ կմնանք»: Այո՛,

աշխարհը իր գույնզգույն հրապույրներով կարող է մեզ գրավել, բայց մենք պետք է զգաստ լինենք ու հիշենք, որ մեր հայրենիքը երկինքն է:

Ուստի, սիրելի՛ հավատակիցներ, հիշենք Հովհաննես առաքյալի այս պարզ պատվերը ու ամեն օր կիրառենք մեր կյանքում, մինչև որ մեր Տերը երևա ու ասի. «Ապրե՛ս, բարի՛ և հավատարի՛մ ծառա»:

Վարդան Սարգիսյան

Մովսեսի անհաջողությունները

Ելից 4:26–5:23

Մովսեսը պատրաստվեց Եգիպտոս վերադառնալու. նա վերջապես ուզում էր Աստծո կամքը կատարել: Այնուամենայնիվ, հետաքրքրական է իմանալ, թե ինչ մտքեր է ունեցել: Կոնկրետ ի՞նչ կակընկալեր նա: Որքանո՞վ էր նա հասկանում Աստծո այն արտահայտությունը, որ փարավոնը թույլ չի տա ժողովրդին գնալ:

Երբ ամեն ինչ սխալ է ընթանում

Սկզբում թվում էր, թե ամեն ինչ լավ է ընթանում: Ահարոնը հանդիպեց Մովսեսին, ինչպես որ Աստված էր պատվիրել: Նրանք միասին հանդիպեցին իսրայելացիների երեցներին, ովքեր ողջունեցին այն լուրը, որ Աստված պատրաստվում է օգնելու Իր ժողովրդին: Հետո անհաջողություններ եղան: Ինչպե՞ս ենք արձագանքում, երբ ամեն ինչ ըստ ծրագրի չի ընթանում:

Մտածե՛ք պատահածի մասին: Թեև Իսրայելի երեցները ուրախ էին Մովսեսի խոսքերից, փարավոնը, անշուշտ, այդպես չէր: Երբ Մովսեսն ու Ահարոնը գնացին նրա մոտ՝ Տիրոջ հրամանով, որ նա բաց թողնի իսրայելացիներին, նա հարցրեց, թե ո՞վ է Եհովան: Նա ոչ միայն հարցրեց, թե ով է Աստված, այլև ասաց, որ թույլ չի տա Իսրայելին գնալ:

Փոխարենը՝ փարավոնը դժվարացրեց ստրուկների կյանքը: Նախկինում նրանց տրամադրվում էր աղյուս պատրաստելու համար անհրաժեշտ ծղոտը, այժմ նրանք պետք է գտնեին դա և նույն չափաբաժինն արտադրեին: Երբ իսրայելացիները ծեծի ենթարկվեցին օրական չափաբաժին չներկայացնելու համար, նրանք շուտով պարզեցին, որ փարավոնին բողոքելը ոչ մի արդյունքի չի հանգեցնելու: Նա մեղադրում էր նրանց ծուլության մեջ և մտադրություն չուներ հեշտացնելու նրանց կյանքը:

Իսրայելացիների երեցները գաղափար չունեին Աստծո և չար ուժերի միջև պայքարի մասին. նրանք պարզապես տեսնում էին, որ իրենց ստրկությունն ավելի դաժան էր, քան նախկինում էր: Նրանք մեղադրեցին Մովսեսին ու Ահարոնին իրենց անախորժությունների համար:

Մովսեսի արձագանքը

Մովսեսը չգիտեր, թե ինչպես վարվել իր առջև ծառացած խնդրի հետ: Փաստորեն, նա ասաց Տիրոջը, որ արել է այն, ինչ իրեն ասվել էր անել, և ամեն ինչ ավելի վատ դարձավ, քան նախկինում էր:

Նա հարցեր տվեց. ինչո՞ւ մեզ նեղություն մեջ գցեցիր: Ինչո՞ւ ես ինձ ուղարկում: Դա արեցիր, որպեսզի ձախողվե՞մ: Մովսեսը չտեսավ (հաճախ մենք նույնպես) Աստծո և Նրա զորքերի ու չար ուժերի միջև շարունակական պայքարը: Սա պատահեց Հովսեփի հետ: Փարավոնի ծառայի երազը բացատրելուց հետո նա նրան ասաց.

«Բայց ինձ հիշի՛ր, երբ քեզ համար լավ լինի, խնդրում եմ, ինձ էլ լավությո՛ւն արա և ինձ հիշի՛ր Փարավոնի առաջ և ինձ հանի՛ր այս տնից. որովհետև իրապես գողացվել եմ եբրայեցիների երկրից և այստեղ էլ մի այնպիսի բան չեմ արել, որի համար ինձ այս զնդանը նետեին» (Ծննդ. 40:14-15):

Բայց Հովսեփը չստացավ այն օգնությունը, որին սպասում էր: Այնուհետև, երբ փարավոնը տեսավ իր երազները, Հովսեփին բանտից կանչեցին՝ թագավորի անմիջական խորհրդատուն լինելու համար:

«Համենայն դեպս, սով բերեց երկրի վրա, կոտրեց հացի ամբողջ զորությունը: Նրանց առջևից մարդ ուղարկեց՝ Հովսեփին, որ ծառայության ծախվեց: Նրա ոտքերը կապանքներով ցավեցրին, նա երկաթի մեջ դրվեց՝ մինչև այնքան ժամանակ, երբ Նրա խոսքը եկավ, Տիրոջ խոսքը փորձեց նրան: Թագավորն ուղարկեց ու արձակեց նրան, ժողովուրդների վրա տիրողն ազատեց նրան: Իր տան վրա տեր դարձրեց նրան և իր ամբողջ ունեցվածքի վրա՝ իշխան. որպեսզի նրա իշխաններին իր կամքի համաձայն կապի ու նրա երեցներին իմաստություն ուսուցանի» (Սաղ. 105:16-22):

Միայն տարիներ անց, երբ Հովսեփը վերամիավորվեց իր եղբայրների հետ, կարողացավ ասել, որ այն չարիքը, որը նրանք նախատեսել էին, Աստծո կողմից ծրագրված էր բարու համար: Միայն փորձություններից հետո Հովսեփը կարողացավ տեսնել Աստծո գերիշխող ձեռքը:

Դավիթը ևս մեկ օրինակ է, ով ընտրվել էր Աստծո կողմից և հետո ստիպված էր սպասել, մինչև Սավուղի մահանալը: Որքա՞ն հաճախ էր Դավիթը մտածում, թե ինչու է ինքը անապատում թաքնվում: Այնուամենայնիվ, հենց այնտեղ նա շատ մոտիկից ճանաչեց իր Աստծուն: Այնտեղ նա նաև սովորեց ղեկավարել տարբեր բնավորության տեր տղամարդկանց:

Մինչ անցնում ենք դժվար ժամանակներով, հաճախ չենք տեսնում այն ընդհանուր ծրագիրը, որն Աստված ունի մեզ համար: Մենք չգիտենք այն ուղին, որը Նա ծրագրել է, որը մեզ ավելի կմոտեցնի Իրեն: Երբեմն Նա կարող է բացահայտել, թե ինչու են որոշ բաներ պատահում. Նա դա արեց Պողոսին՝ մարմնի փուշ ուղարկելիս: Բայց հնարավոր է՝ մինչև ամեն ինչ ավարտելը մենք չգիտակցենք, թե ինչ է Աստված ծրագրել:

Ինչպե՞ս կարձագանքեինք

Հովսեփը ճիշտ դիրքորոշում բռնեց: Մեզ համար հարցն այն է, թե արդյոք մենք համբերությամբ կսպասեի՞նք, որ Աստված անի այն, ինչ Ինքն է ուզում անել: Ցավոք, հաճախ անհամբեր ենք՝ ակնկալելով, որ Աստված անմիջապես փոխի իրադարձությունները:

Մովսեսը բողոքում է

Մովսեսը չէր հասկացել, որ Աստված գիտեր ապագայի դեպքերը, երբ ասաց, թե վստահ է, որ փարավոնը չի արձակի ստրուկներին: Այնուամենայնիվ, փարավոնը վերջնական իշխանությունը չէր, թե՛ ինքը, թե՛ Մովսեսը իմանալու էին, որ Աստված վերահսկում է և ստիպելու է փարավոնին հնազանդվել Իր հրամաններին:

Մովսեսն իր ժողովրդի երեցների կողմից նախատվելուց հետո վերադարձավ Տիրոջ մոտ՝ իր բողոքները ներկայացնելու համար: Նա մտածում էր իսրայելացիների առջև ծառացած լրացուցիչ խնդիրների մասին և հարցրեց, թե ինչո՞ւ Աստված իրեն ուղարկեց փարավոնի մոտ: Փարավոնը ոչ միայն մերժել էր իսրայելացիներին արձակել, այլև ավելացրել էր նրանց տառապանքները, իսկ Աստծո կողմից Իր ժողովրդին ազատելու ոչ մի նշան չկար: Թվում էր՝ Մովսեսն ուզում էր ազատվել իր հանձնարարությունից:

Աստված վերահսկում է

Այնուամենայնիվ, Աստված մտադրություն չուներ Մովսեսին փարավոնի հետ խոսելու իր պարտականությունից արձակել, ոչ էլ թույլ էր տալու, որ փարավոնը շարունակեր չհնազանդվել Իրեն: Փարավոնը կարող էր փորձել ուժով պահել իսրայելացիներին, բայց ի վերջո նա նույնքան ուժգին կհրամայեր նրանց հեռանալ իր երկրից:

Նախ՝ Աստված Մովսեսին հիշեցրեց, թե ով է Ինքը: Նա ասաց «Ես եմ Յահվեն» (սովորաբար թարգմանվում է որպես ՏԵՐ՝ ուխտ պահող Աստված): Նա էր, ով հայտնվեց Աբրահամին, Իսահակին և Հակոբին, որպես ամենակարող Աստված՝ Էլոհիմ Շադդայ՝ ամենակարող Աստված: Սակայն Եհովա, Տեր անունով Նա չհայտնվեց նրանց: Այժմ Նա պետք է ավելին բացահայտեր Իր անվան նշանակությունը:

Աստված արդեն Մովսեսին հայտնվել էր որպես Յահվե՝ Տեր: Աստված ընդգծել էր Իր անվան մի կողմը. Նա հավերժ գոյություն ունեցողն է՝ ԵՍ ԵՄ-ը: Նա է, ով կա և եղել է և երբևէ կլինի: Այժմ Տերը ավելացրեց Մովսեսին ուղղված Իր հայտնությունը՝ հիշեցնելով նրան, որ Ինքը ուխտը պահող Աստված է: Նա Իր ուխտն էր հաստատել Աբրահամի, Իսահակի և Հակոբի հետ՝ խոստանալով նրանց տալ Քանանի երկիրը, որտեղ նրանք ապրում էին որպես պանդուխտ: